# Արձանագրություն N 1

Նիստը կայացել է 2023թ.օգոստոսի 30-ին

Նիստին մասնակցում են տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հ. Գրիգորյանը և խորհրդի բոլոր անդամները, բացառությամբ Աննա Սմբատյանից։

**Օրակարգում՝**

1. *Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատում/զեկուցող մ/մ նախագահ/*
2. Նախորդ ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման գործունեության արդյունքները եւ նոր ուսումնական տարվա խնդիրները/ տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/
3. Մեթոդական միավորման տարեկան աշխատանքի պլանի քննարկումն ու տնօրենի հաստատման ներկայացում*/զեկուցող մ/մ նախագահ/*

4.2023-2024 ուսումնական տարվա I կիսամյակի աշխատանքների բաշխում/զեկուցող՝ մ/մ նախագահ/

5.ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում /զեկուցող՝ մ/մ նախագահ/

6.Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն/զեկուցող՝ մ/մ նախագահ/

7.ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների քննարկում/զեկուցող՝ մ/մ նախագահ/

8. 2023-2024 ուսումնական տարվա առարկայական թեմատիկ պլաններին հավանություն տալը և տնօրենի հաստատմանը ներկայացնելը/զեկուցողներ մ/մ անդամներ/

9. Թեմատիկ գրավոր աշխատանքների կիսամյակի ընթացքում նվազագույն քանակի քննարկում/զեկուցող *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/*

10.նոր ուսումնական տարվա աշխատանքները կանոնակարգող իրավական փաստաթղթերի ուսումնասիրություն/զեկուցող *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/*

11.Օրվա դասի պլանների մշակման և կազմման հարցը/զեկուցող՝ մ/մ նախագահ/

12. Սովորողներին հանձնարարվող տնային աշխատանքի տեսակներ/զեկուցող՝ մ/մ նախագահ/

13.2023-2024 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նախագծի մասին (զեկուցող՝ մ/մ նախագահ)

14.Փոխադարձ դասալսումների մասին/զեկուցող *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/*

Сканировано с CamScanner

*15.* Արտադասարանական ուսումնական խմբակների հաճախության մասին և տնօրենի համապատասխան ներկայացնելու հարցը (զեկուցող՝ մ/մ նախագահ)

*16. 2-րդ դասարաններում մեթոդական միավորման ուսուցիչների կողմից հայտորոշիչ, ձևավորող գնահատման ձևերը քննելու և ամփոփիչ գնահատման (միավորային, բնութագրող) մեթոդների քննության մասին: /զեկուցող տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/*

*17.* Գիտելիքների ստուգման՝ մայրենիի և մաթեմատիկայի քննության, չներկայացած, անբավարար ստացած աշակերտների վերաքննության արդյունքների քննարկում

*18.Առաջարկվող հարցեր/ըստ կարիքի/*

Լսեցին՝

*1.Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատման հարցը /զեկուցող՝ մ/մ նախագահ՝ Տ. Սահակյան*

*Մեթոդական միավորման նախագահ Տ. Սահակյանը ներկայացրեց մ/մ նիստի օրակարգի հարցերը՝ բաղկացած 17 կետերից:*

*Հիմք ընդունելով մ/մ նախագահի կողմից ներկայացրած օրակարգը՝ մ/մ*

ՈՐՈՇՈՒՄ Է:

*Հաստատել մեթոդական միավորման օրակարգը*

Լսեցին՝

2.նախորդ ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման գործունեության արդյունքները և նոր ուսումնական տարվա խնդիրները/զեկուցող՝տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հ. Գրիգորյանը ներկայացրեց նախորդ ուսումնական տարում մ/մ կատարած աշխատանքները.
ա/ նախորդ ուսումնական տարվա տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքները կատարվել են ըստ սահմանված ժամանակացույցի
բ/ի հայտ եկած խնդիրները լուծվել են տնօրենության հետ համատեղ
գ/աշխատանքային թերացումները շտկվել են ՆԴԿ արդյունքում
Նոր ուսումնական տարում՝
ա/ աշխատանքները կազմակերպելիս հաշվի առնել անցած ուսումնական տարվա ընթացքում առաջացած խնդիրները և դրանց լուծման ճանապարհ

Сканировано с CamScanner

բ/նախապատրաստվել 2023-2024 ուսումնական տարվանից 2-րդ դասարանում հանրակրթական պետական չափորոշիչների,առարկայական չափորոշիչների և ծրագրերի ներդրման աշխատանքներին. ուսումնասիրել առարկայական չափորոշիչները և ծրագրերը,անհրաժեշտության դեպքում տրամադրել խորհրդատվություններ,կազմակերպել սեմինարներ
գ/2022-2023 ուսումնական տարում մեթոդական միավորման աշխատանքները կազմակերպել մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանի համաձայն:

2. Գրիգորյանը առաջարկեց 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքները կազմակերպելիս առաջնորդվել ներկայացված կետերով:

*Հիմք ընդունելով տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կողմից ներկայացված առաջարկները՝ մ/մ*

ՈՐՈՇՈՒՄ Է:

*2023-2024 ուսումնական տարվա աշխատանքները կազմակերպելիս առաջնորդվել*

*ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից ներկայացված առաջարկները*

**Լսեցին՝**

**3. Մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանի քննարկման և տնօրենի հաստատման ներկայացման հարցը/զեկուցող՝ մ/մ նախագահ Տ. Սահակյան**

Արտահայտվեց մ/մ նախագահ՝ Տ. Սահակյանը, ով նշեց ,որ մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը կազմվել է մեթոդական միավորման անդամների առաջարկների և հանրակրթության բնագավառի օրենսդրության հիման վրա և բխում է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից:

*Հիմք ընդունելով մ/մ նախագահի կողմից ներկայացված աշխատանքային տարեկան պլանը և ղեկավարվելով ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանով հաստատված Հավելված N 2 13-րդ կետի 1-ին ենթակետով՝ մ/մ*

ՈՐՈՇՈՒՄ Է:

*Մեթոդական միավորման 2023-2024 ուսումնական տարվա տարեկան աշխատանքային պլանը ներկայացնել տնօրենի հաստատմանը*

**Լսեցին՝**

**4. 2023-2024 ուսումնական տարվա I կիսամյակի աշխատանքների բաշխում /զեկուցող՝ մ/մ նախագահ/**

Արտահայտվեց մ/մ նախագահ՝ Տ. Սահակյանը, ով ներկայացրեց I կիսամյակի աշխատանքների բաշխումը մեթոդական միավորման անդամների

Сканировано с CamScanner

միջև:Աշխատանքները բաշխվել են հաշվի առնելով մ/մ անդամների առաջարկները,տեսակետները և նախաձեռնությունները:Մ/մ նախագահ Տ. Սահակյանը ներկայացրեց, որ ուսումնական տարվա ընթացքում մ/մ անդամները ներկայացնելու են մեթոդական զեկույցներ,կազմակերպելու են առարկայական մրցույթներ, բաց դասեր և այլն:

*Հիմք ընդունելով մ/մ նախագահի կողմից ներկայացրած* 2022-2023 ուսումնական տարվա I կիսամյակի աշխատանքների բաշխում *մ/մ*

ՈՐՈՇՈՒՄ Է

*Հաստատել մեթոդական միավորման անդամների աշխատանքների բաշխումը՝համաձայն տարեկան աշխատանքային պլանի:*

**Լսեցին՝**

**5. Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում /զեկուցող մ/մ նախագահ Տ. Սահակյան/**

**Մ/մ նախագահ Սահակյանը ներկայացրեց, որ ԿԳՄՍ նախարարի 2021թ.հուլիսի 20-ի N 54-Ն հրամանով հաստատվել է հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022, 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները,որի հիման վրա էլ անհրաժեշտ է կատարել նախնական դասաբաշխում հետևյալ կերպ.**

| N | Անուն, ազգանուն | Առարկան | Դասարան | Ժամերի քանակ |
|---|---|---|---|---|
| 1 | Գասպարյան Ժանետա | Մայրենի<br>Մաթեմատիկա<br>Ես և շրջակա աշխարհը<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա | 4-րդ | 16+2 |
| 2 | Հայրապետյան Նելլի | Մայրենի<br>Մաթեմատիկա<br>Ես և շրջակա աշխարհը<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա | 4-րդ | 23+2 |
| 3 | Պապյան Անահիտ | Մայրենի<br>Մաթեմատիկա<br>Ես և շրջակա աշխարհը<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա | 1-ին | 15+2 |
| 4 | Մինասյան Լալա | Մայրենի<br>Մաթեմատիկա<br>Ես և շրջակա աշխարհը<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա | 3-րդ | 18+2 |

Сканировано с CamScanner

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Սահակյան Տաթևիկ | Մայրենի<br>Մաթեմատիկա<br>Ես և շրջակա աշխարհը<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա<br>Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն | 2-րդ | 19+2 |
| 6 | Թաղևոսյան Քնարիկ | Մայրենի<br>Մաթեմատիկա<br>Ես և շրջակա աշխարհը<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա | 1-ին | 15+2 |
| 7 | Ղազարյան Արմինե | Մայրենի<br>Մաթեմատիկա<br>Ես և շրջակա աշխարհը<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա<br>Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն | 2-րդ | 17+2 |
| 8 | Ղազարյան Աննա | Մայրենի<br>Մաթեմատիկա<br>Ես և շրջակա աշխարհը<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա<br>Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն | 2-րդ | 17+2 |
| 9 | Ծատուրյան Գայանե | Մայրենի<br>Մաթեմատիկա<br>Ես և շրջակա աշխարհը<br>Կերպարվեստ<br>Տեխնոլոգիա | 3-րդ | 23 |
| 10 | Սիմոնյան Մարիամ | Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացում<br>Խոսքի զարգացում<br>Էկոլոգիա<br>Գրաճանաչություն<br>Ֆիզկուլտուրա<br>Նկարչություն<br>Ապլիկացիա<br>Ծեփակերտում | նախակրթարան | |
| 11 | Պապեյան Հասմիկ | Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացում<br>Խոսքի զարգացում<br>Էկոլոգիա<br>Գրաճանաչություն<br>Ֆիզկուլտուրա<br>Նկարչություն<br>Ապլիկացիա<br>Ծեփակերտում | նախակրթարան | |

Сканировано с CamScanner

*Հիմք ընդունելով հաստատության Կանոնադրության 93-րդ կետի 10-րդ ենթակետը մ/մ*

**ՈՐՈՇՈՒՄ Է**

*Մեթոդական միավորման կողմից կատարված նախնական դասաբաշխումը ներկայացնել տնօրենին:*

**Լսեցին՝**

6. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն/հաղորդող՝ մ/մ նախագահ/
Մ/մ նախագահը ներկայացրեց,որԿԳՄՍ նախարարի 2021թ.հուլիսի 20-ի N 54-Ն հրամանով հաստատվել է հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022, 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները,որի համաձայն դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով: Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով: Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից:
Հարցի շուրջ արտահայտվեցին մ/մ անդամները,ովքեր ներկայացրեցին իրենց հիմնավորումները դպրոցական բաղադրիչի վերաբերյալ և առաջարկեցին դպրոցական բաղադրիչը բաշխել գերմաներեն առարկային:

*Հիմք ընդունելով հաստատության Կանոնադրության 93-րդ կետի 9-րդ ենթակետը մ/մ*

Сканировано с CamScanner

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Առաջարկել մանկավարժական խորհրդին՝ քննարկել սույն որոշմամբ բերված դպրոցական բաղադրիչի բաշխման նախագիծը և սահմանված կարգով ներկայացնել տնօրենի հաստատմանը :

**Լսեցին՝**

**7.Մ/մ անդամները ներկայացրեցին,որ որպես դասավանդող ուսուցիչ մասնակցել են հաստատության կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանի մշակման և վարման աշխատանքներին՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կարիքները, ուժեղ կողմերն ու հետաքրքրությունները և հանրակրթության պետական չափորոշիչի և պահանջները: Անդրադարձել են դրված կարճ նպատակներին,դրանց հասնելու գործողություններին: Համագործակցել են ուսուցչի օգնականի,ՏՄԱԿ-ի,աջակցող թիմի մասնագետների, սովորողի ծնողի հետ՝ ԿԱՊԿՈւ երեխաների դասերի մասնակցայնությունը հնարավորինս արդյունավետ դարձնելու համար:**

*Հիմք ընդունելով հաստատության Կանոնադրության 93-րդ կետի 9-րդ ենթակետը մ/մ*

## ՈՐՈՇՈՒՄ Է

Յուրաքանչյուր ամիս քննարկել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանով նախատեսված նպատակների իրականացումը

**Լսեցին՝**

**8. 2023-2024 ուսումնական տարվա առարկայական թեմատիկ պլաններին հավանություն տալը և տնօրենի հաստատմանը ներկայացնելը/զեկուցողներ մ/մ անդամներ/**

**Արտահայտվեցին մ/մ անդամները,ովքեր ներկայացրեցին,որ առարկայական թեմատիկ պլանները կազմվել են գործող առարկայական չափորոշիչների ու ծրագրերի հիման վրա:Մեթոդական միավորման նախագահ Տ. Սահակյանը ներկայացրեց, որ թեմատիկ պլանները կազմվել են** *ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանով հաստատված Հավելված N 2 12-րդ կետին համապատասխան՝ ներառելով հետևյալ կետերը*

**1) Առարկայի անվանումը**

**2) Դասարանը**

**3) Տարեկան ժամաքանակը ըստ ուսումնական պլանի**

Сканировано с CamScanner

4) Յուրաքանչյուր դամի թեման՝ նոր տողից

5) Թեմայի ընթացքում ուսուցանվող նյութի վերնագիրը և էջը դասագրքում

Մ/մ նախագահը նշեց նաև ,որ յուրաքանչյուր ուսուցիչ իր որոշմամբ թեմատիկ պլանում կարող է ավելացնել այլ տեղեկություն:

Հիմք ընդունելով մ/մ անդամների և նախագահի ելույթները և ղեկավարվելով *ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանով հաստատված Հավելված N 2 12-րդ կետի պահանջներով՝ մ/մ*

ՈՐՈՇՈՒՄ Է

*Հավանություն տալ մեթոդական միավորման անդամների առարկայական թեմատիկ պլաններին և ներկայացնել տնօրենի հաստատմանը*

Լսեցին՝

9.2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի թեմատիկ գրավոր աշխատանքների նվազագույն քանակի քննարկում/զեկուցող *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/*

*տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հ. Գրիգորյանը*

*ներկայացրեց,որ ըստ* ԿԳՄՍ նախարարի 2021թ.հուլիսի 20-ի N 54-Ն հրամանի 21-րդ կետի բանավոր հարցումների, գործնական աշխատանքների, թեմատիկ աշխատանքների նվազագույն թիվը կիսամյակի ընթացքում սահմանում է Հաստատությունը՝ մանկավարժական խորհրդի որոշմամբ, առաջնորդվելով Նախարարության կողմից հաստատված առարկայի ծրագրով, գնահատման մեթոդաբանությամբ և մեթոդական ցուցումներով: Ելնելով վերոգրյալից *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հ. Գրիգորյանը*

առաջարկեց մ/մ անդամներին սահմանել թեմատիկ գրավոր աշխատանքների նվազագույն թիվը կիսամյակի ընթացքում և ներկայացնել մանկավարժական խորհրդին:

Հիմք ընդունելով *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի զեկույցը և ղեկավարվելով* ԿԳՄՍ նախարարի 2021թ.հուլիսի 20-ի N 54-Ն հրամանի 21-րդ կետով՝ մ/մ

ՈՐՈՇՈՒՄ Է

2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի թեմատիկ գրավոր աշխատանքների նվազագույն թիվը սահմանել հետևյալ կերպ և ներկայացնել մանկավարժական խորհրդին

| Դասարան | Առարկա | Քանակ |
|---|---|---|

Сканировано с CamScanner

| | | |
|---|---|---|
| 2-րդ | Մաթեմատիկա | 3 |
| | Մայրենի | 3 |
| | Ես և շրջակա աշխարհը | 1 |
| 3-րդ | Մայրենի | 6 |
| | Մաթեմատիկա | 6 |
| | Ես և շրջակա աշխարհը | 1 |
| 4-րդ | Մայրենի | 4 |
| | Մաթեմատիկա | 4 |
| | Ես և շրջակա աշխարհը | 1 |

**Լսեցին՝**

**10.Նոր ուսումնական տարվա աշխատանքները կանոնակարգող իրավական փաստաթղթերի ուսումնասիրություն/զեկուցող՝** *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/*

*Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հ. Գրիգորյանը ներկայացրեց հանրակրթության բնագավառը կարգավորող օրենսդրությունը,դրանում կատարված փոփոխությունները,անդրադարձ կատարեց 2023-2024 ուսումնական տարում գործածության մեջ դրվող Հանրակրթական պետական չափորոշչին,խմբակների և նախագծային աշխատանքների ,ուսուցիչների ներքական,կամավոր ատեստավորման և տարակարգի կարգերին:*

*Առաջնորդվելով տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ զեկույցով մ/մ*

**ՈՐՈՇՈՒՄ Է;**

*2023-2024 ուսումնական տարվա աշխատանքները իրականացնելիս առաջնորդվել հանրակրթության բնագավառը կարգավորվող օրենսդրությամբ:*

**Լսեցին՝**

**11. Օրվա դասի պլանների մշակման և կազմման հարցը/զեկուցող՝ մ/մ նախագահ**

Մ/մ նախագահը ներկայացրեց,որ համաձայն պաշտոնային նկարագրի ուսուցիչը պլանավորում և անցկացնում է դասը,սակայն օրվա դասի պլանի մշակման և կազմման հետ կապված որևէ իրավական կարգավորում չկա,ուստի անհրաժեշտ է , որ մ/մ մշակի և կազմի օրվա դասի պլանի կազմման ձևաչափ:Մ/մ անդամները առաջարկեցին օրվա դասի պլանները կազմելիս առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

հստակ նշել դասի նպատակը, վերջնարդյունքները, խնդիրները և մեթոդները, սովորողների մասնակցությունը ենթադրող գործողությունները, որոնք կնպաստեն սովորողների արդյունավետ ուսումնառությանն ու զարգացմանը, որում պլանավորված կլինեն յուրաքանչյուր սովորողի մասնակցությունը և

ներգրավվածությունը,դասը պլանավորել ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխան:

Առաջնորդվելով մ/մ անդամների առաջարկներով՝ մ/մ

ՈՐՈՇՈՒՄ Է

2023-2024 ուսումնական տարվա դասի պլանները կազմելիս առաջնորդվել ներկայացված առաջարկներով

Լսեցին՝

12. Սովորողներին հանձնարարվող տնային աշխատանքի տեսակներ/զեկուցող՝ մ/մ նախագահ/

Մ/մ նախագահն անդրադարձ կատարեց սովորողներին հանձնարարվող տնային աշխատանքների տեսակներին,որոնք մշակվել են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից,ըստ որի

առանձնացվել է տնային աշխատանքների հետևյալ տեսակները՝

- անհատական
- խմբային
- ստեղծագործական
- տարբերակված
- մեկը ամբողջ դասարանի համար
- ընկերոջ համար տնային աշխատանք կատարելը:

Մ/մ նախագահն ներկայացրեց նաև տնային ուսուցման տեսակները,որոնք կարելի է բաժանել երեք խմբի՝

- բանավոր,
- գրավոր,
- ուսումնա-գործնական:

Առաջնորդվելով մ/մ նախագահի զեկույցով՝ մ/մ

ՈՐՈՇՈՒՄ Է

Սովորողներին տնային աշխատանքներ հանձնարարելու ժամանակ առաջնորդվել ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից մշակված ուղեցույցով:

13.2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նախագծի մասին (զեկուցող՝ մ/մ նախագահ Տ. Սահակյան)

Մ/մ նախագահը ներկայացրեց,որ 2023-2024 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը կազմելու համար անհրաժեշտ է ներկայացնել առաջարկներ:Հարցի շուրջ հանդես եկան մ/մ անդամները,որոնք առաջարկեցին 2022-2023 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանում ընդգրկել հետևյալ միջոցառումները.

Сканировано с CamScanner

| N | Միջոցառման անվանումը | Կատարող | ժամկետ |
|---|---|---|---|
| | Հրաժեշտ Այբբենարանին | 1-ին դասարանի դասվարներ՝ Անահիտ Պապյան Քնարիկ Թադևոսյան | ապրիլ |
| | Հրաժեշտ կրտսեր դպրոցին | 4-րդ դասարանի դասվարներ՝ Գասպարյան Ժաննա Հայրապետյան Նելլի | մայիս |
| | Գրքի տոն | Ղազարյան Արմինե | փետրվար |
| | Մայրիկների տոն | Ղազարյան Աննա | ապրիլ |
| | Հայրենիք | Սահակյան Տաթև | մայիս |
| | Հեքիաթ | Մինասյան Լալա | փետրվար |
| | Խաղաղություն | Ծատուրյան Գայանե | ապրիլ |
| | Գարուն | Պապեյան Հասմիկ | մարտ-ապրիլ |
| | Գարուն | Սիմոնյան Մարիամ | մարտ-ապրիլ |

Հիմք ընդունելով մ/մ նախագահի և անդամների առաջարկները և ղեկավարվելով հաստատության Կանոնադրությամբ

ՈՐՈՇՈՒՄ Է

Առաջարկված միջոցառումների ցանկը ներկայացնել մանկավարժական խորհրդին՝ տնօրենի հաստատմանը ներկայացնելու համար:

**Լսեցին՝**

14.Փոխադարձ դասալսումների մասին/զեկուցող *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/*

*Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ-Հ. Գրիգորյանը ներկայացրեց,որ փոխադարձ դասալսումները հանդիսանում են ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս և նպաստում են փորձի փոխանակմանը,նորագույն մեթոդների տարածմանը,սկսնակ ուսուցիչների օգնությանը,իսկ տարակարգի դիմելու համար փաստաթղթերի ցանկում ընդգրկված է նաև դասալսումների արձանագրությունները: Հ. Գրիգորյանը ներկայացրեց,որ դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված է*

*2022-2023 ուսումնական տարվա դասալսումներ կատարելու հետևյալ քանակը.*

*1.Մ/Մ նախագահ-շաբաթական-2 կամ 3 ժամ*

*2.Ուսուցիչներ- շաբաթական-1 կամ 2 ժամ*

Сканировано с CamScanner

*Առաջնորդվելով տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի զեկույցով և դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով՝ մ/մ*

**ՈՐՈՇՈՒՄ Է**

*2022-2023 ուսումնական տարում իրականացնել փոխադարձ դասալսումներ հետևյալ քանակով՝*

*1.Մ/մ նախագահ-շաբաթական-2*

*2.Ուսուցիչներ- շաբաթական- 2 ժամ*

Հիմք ընդունելով փոխտնօրենի զեկույցը և ՀՀ Կառավարության 2023թ. հունվարի 26-ի N 98 -Ն որոշումը՝ մանկավարժական խորհուրդը

Որոշում է

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների մասնագիտական զարգացման կարիքների գնահատումը իրականացնել համաձայն ՀՀ Կառավարության 2023թ. հունվարի 26-ի N 98 -Ն որոշման և ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից հրապարակված աշխատակարգի և ուղեցույցի (կցվում է):

15.Արտադասարանական ուսումնական խմբակների հավանության տալու և տնօրենի հաստատմանը ներկայացնելու հարցը (զեկուցող՝ մ/մ նախագահ)

Լսեցին՝

Մ/մ նախագահը և անդամները ներկայացրեցին, 2023-2024 ուսումնական տարվա արտադասարանական ուսումնադաստիարակչական խմբակների ծրագրերը:

**ՈՐՈՇՈՒՄ Է**

*Հավանություն տալ մեթոդական միավորման անդամների արտադասարանական ուսումնական խմբակները ներկայացնել տնօրենի հաստատմանը:*

16. 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում մեթոդական միավորման ուսուցիչների կողմից հայտորոշիչ, ձևավորող գնահատման ձևերը ընտրելու և ամփոփիչ գնահատման (միավորային, բնութագր.) մեթոդների ընտրության մասին:

Հ. Գրիգորյանը ներկայացրեց, որ ԿԳՄՍ նախարարի 2023թ. փետրվարի N24-ի 11-Ն հրամանով հաստատվել է պետական հանրակրթական ուսումնական

Сканировано с CamScanner

հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, որի համաձայն 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները պետք է ընտրեն հայտորոշիչ, ձևավորող գնահատման ձևերը և ամփոփիչ գնահատման (միավորային, բնութագրող) մեթոդները: Տնօրենի տեղակալը մանրամասնորեն ներկայացրեց նախարարի հրամանով հաստատված գնահատման ձևերը և ներկայացրեց, որ մեթոդմիավորման անդամների կողմից պետք է ընտրվի գնահատման ձևերը և ներկայացվի տնօրենի հաստատմանը

Հիմք ընդունելով Հ. Գրիգորյանը զեկույցը և ԿԳՄՍ նախարարի 2023թ. փետրվարի N 24-ին 11-Ն հրամանը՝ առարկայական մեթոդական միավորումը

Որոշում է

Տնօրենի հաստատմանը ներկայացնել ուսուցչների կողմից ընտրված գնահատման հետևյալ ձևերը՝

2-րդ դասարանների հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատումն իրականացնել բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համարի կազմել ուսումնական առաջադիմության բնութագիր:

17. Գիտելիքների ստուգման՝ մայրենիի և մաթեմատիկայի քննության, չներկայացած, անբավարար ստացած աշակերտների վերաքննության արդյունքների քննարկում /զեկուցող՝ *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/*

*Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հ. Գրիգորյանը ներկայացրեց* գիտելիքների ստուգման՝ մայրենիի և մաթեմատիկայի քննության, չներկայացած, անբավարար ստացած աշակերտների վերաքննության արդյունքները

| *Անուն, ազգանուն* | *Առարկա* | *Գնահատական* |
|---|---|---|
| *Կալոյան Զոյա* | *Մաթեմատիկա* | 5 |
| | *Մայրենի* | 7 |
| *Մկրտչյան Գագիկ* | *Մայրենի* | 4 |

Նախագահ՝ / / Տաթևիկ Սահակյան

Сканировано с CamScanner

# Արձանագրություն N 2

Արտահերթ նիստը կայացել է 2023թ. սեպտեմբերի 13-ին

Նիստին մասնակցում են տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հ. Գրիգորյանը և խորհրդի բոլոր անդամները, բացառությամբ Աննա Սմբատյանից:

**Օրակարգում՝**

*1. 2022-2023 ուս. տարում մարտ ամսից ՌԴ մեկնած և գիտելիքների ստուգման՝ մայրենիի և մաթեմատիկայի քննությանը չներկայացած,* Գագիկ Մասիսի Մաղաքյանի և Գուրգեն Մասիսի Մաղաքյանի ուսումը 5-րդ դասարանում շարունակելու հարցը: /զեկուցող *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/*

**Լսեցին՝**

*2022-2023 ուս. տարում մարտի 13-ից ՌԴ մեկնած և գիտելիքների ստուգման՝ մայրենիի և մաթեմատիկայի քննությանը չներկայացած, Գագիկ Մասիսի Մաղաքյանի և Գուրգեն Մասիսի Մաղաքյանի ուսումը 5-րդ դասարանում շարունակելու հարցը: 2022-2023 ուսումնական տարվա 4-րդ դասարանից՝ 2023 թվականի մարտի 13-ից երեխաները մեկնել են ՌԴ, այժմ վերադարձել են Հայաստան, մշտապես բնակվելու են Մարգարապատ գյուղում: Գագիկ Մասիսի Մաղաքյանը և Գուրգեն Մասիսի Մաղաքյանը ամառվա ընթացքում սովորել և յուրացրել են բաց թողած ծրագրային նյութը:*

*Հիմք ընդունելով Մասիս Մաղաքյանի 28.09.2023թ-ի դիմումը և 29.08.2023թ N 05/11.1./06077-2023 մարզպետի գլխավոր քարտուղար Ա.Հովհաննիսյանի գրությունը կազմակերպել գիտելիքների ստուգում և երեխաներին նստացնել համապատասխան դասարան, պահպանելով երեխաների սովորելու իրավունքը:*

/զեկուցող *տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ/*

**ՈՐՈՇՈՒՄ Է**

*Երեխաները կարող են մասնակցել գիտելիքների ստուգմանը և դրական գնահատական ստանալու դեպքում 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում ուսումը շարունակել 5-րդ դասարանում:*

Նախագահ՝ / / Տաթևիկ Սահակյան

Сканировано с CamScanner

# *Արձանագրություն N 3*

Նիստը կայացել է 2023թ.սեպտեմբերի 29-ին

Նիստին մասնակցում են տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Հ. Գրիգորյանը և խորհրդի բոլոր անդամները, բացառությամբ Աննա Ամբարտյանից:

1. *Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատում զեկուցող մ/մ նախագահ/*

2. Նախորդ մեթոդմիավորման նիստի որոշումների կատարման մասին մեթոդմիավորման նախագահի զեկուցում:

3. 2-րդ դասարաններում նոր չափորոշիչների և ծրագրերի ուսումնասիրում և քննարկում

4. Բաց դասերի, ըստ առարկաների արտադասարանական միջոցառումների , էքսկուրսիաների, առարկայական շաբաթների, միջոցառումների հարցի քննարկում

5.<<Ընթերցանությունը տարրական դասարաններում>> ծրագրի քննարկում, 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարաններում նախնական դիտարկման կազմակերպում, կատարողական հարցերի քննարկում

6.էլեկտրոնային մատյանների ստուգումների արդյունքների քննարկում

7. ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների քննարկում/զեկուցող՝ մ/մ նախագահ/

8. *Առաջարկվող հարցեր/ըստ կարիքի/.*

Լսեցին՝

*1. Մեթոդական միավորման նիստի օրակարգի հաստատման հարցը /զեկուցող՝մ/մ նախագահ՝Տ. Սահակյան*
*Մեթոդական միավորման նախագահ Տ. Սահակյանը ներկայացեց մ/մ նիստի օրակարգի հարցերը՝ բաղկացած 7 կետերից;*
*Հիմք ընդունելով մ/մ նախագահի կողմից ներկայացրած օրակարգը՝ մ/մ*

ՈՐՈՇՈՒՄ Ւ:

*Հաստատել մեթոդական միավորման օրակարգը*

Լսեցին՝

2. Նախորդ մեթոդմիավորման նիստի որոշումների կատարման մասին մեթոդմիավորման նախագահի զեկուցում/*զեկուցող՝մ/մ նախագահ՝Տ. Սահակյան*

Сканировано с CamScanner

*Մեթոդական միավորման նախագահ Տ. Սահակյանը ներկայացեց* նախորդ մեթոդմիավորման նիստի որոշումների մ/մ անդամների կատարողականը:
2-րդ դասարանի աշակերտները դասագրքեր չունեն, առաջարկվեց կրկին պատճենել դասագրքերը:

ՈՐՈՇՈՒՄ Է

*Շարունակել պատճենել 2-րդ դասարանի դասագրքերը:*

Լսեցին՝

3. 2-րդ դասարաններում նոր չափորոշիչների և ծրագրերի ուսումնասիրում և քննարկում/*զեկուցող մ/մ նախագահ Տ. Սահակյան*

*Մեթոդմիավորման նախագահ Տ. Սահակյանը առաջարկեց 2-րդ դասարաններում դասվանդող ուսուցիչները կազմել բնութագրիչներ և յուրաքնչյուր աշակետի համար կատարել նշումներ:*

ՈՐՈՇՈՒՄ Է

*Պարբերաբար կատարել հայտորոշիչ և ձևավորող գնահատում, ինչպես նաև կազմել թեմաների վերջնարդյունքների գնահատման հարցաշարեր:*

Լսեցին՝

4. Բաց դասերի, ըստ առարկաների արտադասարանական միջոցառումների , էքսկուրսիաների, առարկայական շաբաթների, միջոցառումների հարցի քննարկում/ զեկուցող/ փոխտնօրեն, մ/մ նախագահ, անդամներ

Փոխտնօրեն Հ. Գրիգորյանը տեղեկացրեց, որ հեկտեմբեր ամսին մաթեմատիկայի և մայրենիի դասավանդման դրվածքն է տարրական դասարաններում: Ինչպես նաև առարկայական շաբաթներն են տարրական դասարաններում /հոկտեմբերի 2-հոկտեմբերի 16/ : Ուսուցիչները ներկայացրեցին բաց դասերի օրերը:

ՈՐՈՇՈՒՄ Է

Կատարել փոխադարձ դասալսումներ:

Լսեցին՝

5. <<Ընթերցանությունը տարրական դասարաններում>> ծրագրի քննարկում, 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարաններում նախնական դիտարկման կազմակերպում, կատարողական հարցերի քննարկում/ փոխտնօրեն, մ/մ նախագահ

Сканировано с CamScanner

Փոխտնօրեն Հ. Գրիգորյանը հանձնարարեց 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարանների աշակերտների հետ կատարել դիտարկումներ, արդյունքները գրանցել:

ՈՐՈՇՈՒՄ Է:

<<Ընթերցանությունը տարրական դասարաններում>> ծրագրի շրջանակներում 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարաններում կազմակերպել նախնական դիտարկում, արդյունքների գրանցում:

Լսեցին՝
6.Էլեկտրոնային մատյանների ստուգումների արդյունքների քննարկում
Փոխտնօրեն Հ. Գրիգորյանը ներկայացրեց մատյաններ ստուգումների արդյունքները:

ՈՐՈՇՈՒՄ Է

*Ժամանակին կատարել գրանցումներ էլեկտրոնային մատյաններում:*

Լսեցին՝
7. ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒԴ-ների քննարկում/զեկուցող՝փոխտնօրեն, մ/մ նախագահ
Փոխտնօրեն Հ. Գրիկգորյանը ներկայացրց անհատական ուսուցման պլանները, որոնք կազմել էին ուսուցիչները:

ՈՐՈՇՈՒՄ Է

Կապկու սովորաղների ուսումնառությունը կազմակերպել ԱՈՒԴ-ներին համապատասխան:

Сканировано с CamScanner

Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն՝

Կ. Սմբատյան

«Մարդարապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

2023-2024 ուսումնական տարվա

<< ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ >>

Մեթոդական միավորման

Հաշվետվություն

Տաթևիկ Սահակյան

I կիսամյակ

Сканировано с CamScanner

## 2023-2024 ուսումնական տարվա I կիսամյակում

2023-2024 ուսումնական տարվա տարրական կրթության մեթոդական միավորման աշխատանքները քննարկել եմ հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, 2-րդ դասարանում նոր դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ դասվարներին տվել երաշխավորություններ: Սահմանված կարգով կազմակերպել եմ փորձարկվող դասագրքի փորձաքննություն, որի արդյունքները կներկայացնեմ հաջորդ կիսամյակում:

Մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո դպրոցի տնօրենին ներկայացրել եմ առաջարկություն ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ:

Կատարել եմ ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկությունը ներկայացրել դպրոցի տնօրենին.

2-րդ դասարանում անհատական բաղադրիչը հատկացրել ենք խմբակների տեսքով՝ նոր ՀՊՉ-ի համաձայն:

Քննարկել եմ նախակրթարանի 2023-2024 ուսումնական տարվա օրվա ռեժիմը, ընդունելության կարգը, ժամանակացույցը և ուսուցանվող առարկայական ծրագրի ցանկը՝ համաձայն հավելված 1-ի, 2-ի և 3-ի: Դպրոցի նախակրթարանի աշխատանքների կատարման համար առաջրակել եմ 5 ժամ, քանի որ երեխաները սնվում են մեկ անգամ ստանում են տաք սնունդ՝ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակում:

Նախակրթարանի աշխատանքների սկիզբը սահմանել ենք սկսել դպրոցի հետ ժամը 9:00-ից, իսկ ավարտը 13:45, իսկ 13:45-14:00 սահմանել տուն գնալու ժամանակահատված: Սահմանված ներդպրոցական վերահսկողության (ՆԴՎ) տնօրենության կողմից աշխատանքները իրականացրել ենք հետևյալ կերպ.

- ✓ մնացորդային գիտելիքների ստուգում IV դասարանում սեպտեմբերին
- ✓ ընթերցանության գնահատման II, III և IV դասարաններում կիսամյակի ընթացքում
- ✓ տնօրենության կողմից վերահսկվող թեմատիկ գրավոր աշխատանքներ II, III, և IV դասարաններում՝ նոյեմբերին:

Сканировано с CamScanner

Ուսումնասիրել և ընդհանրացրել եմ մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդրել գործնական աշխատանքում: Կազմակերպվել են բաց դասեր I<sup>ա</sup> և I<sup>բ</sup> դասարաններում «Մ. տառի շնորհանդես» դասվարներ Ա. Պապյանի և Ք. Թադևոսյանի, II<sup>բ</sup> դասարաններում տեխնոլոգիա առարկայից Տ. Սահակյանի, II<sup>ա</sup> մայրենի առարկայից Ա. Ղազարյանի և III<sup>ա</sup> դասարանում Ա. Սմբատյանի կողմից մաթեմատիկա և մայրենի առարկաներից, Մ. Սիմոնյանի նախակրթարանի «բ» խմբում մաթեմատիկայից :

Համագործակցել եմ մեր գործընկերներ՝ ՄԿԱ գծով փոխտնօրեն՝ Մ.Պետրոսյանի, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչներ (ԴԱԿ)՝ Ս. Աֆրիկյանի և Հ. Շախնազարյանի: Փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով կազմակերպել ենք ցերեկույթներ՝ «Առաջին զանգ», «Աշնան շուկա», ««Ուրախ Ամանոր»: Ապահովել եմ աշակերտների մասնակցությունը դասարանական և դպրոցական միջոցառումներին:

Կազմակերպել եմ մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ: Ուսուցիչներին հաղորդակից եմ դարձրել մանկավարժության նորագույն նվաճումներին, https://lib.armedu.am և https://kznakhimnadram.blogspot.com կայքէջերի նորություններին, կազմակերպել եմ սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

- ✓ Տ. Սահակյան «2-րդ դասարանում նոր չափորոշիչների, ծրագրերի իրագործումը» «Ձևավորող գնահատման բաղադրիչները»
- ✓ Մ. Սիմոնյան «Դաստիարակությու՞ն, թե գենետիկա»

Մեթոդմիավորման բոլոր նիստերին անդրադարձել և քննարկել ենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՈՒՊ-ները:

Գյուղի ամբուլատորիայի կողմից դպրոցին կցված բուժքրոջ միջոցով սիստեմատիկ կատարել ենք սանիտարական վիճակի գնահատում և բուժզննում:

Գումարել ենք առարկայական մեթոդական միավորումների նիստերը առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվել են:

Сканировано с CamScanner

Աշխատանքի ընթացքում պահպանել եմ ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

Տարրական բոլոր դասարաններում և նախակրթարանում կազմակերպել ենք տարաբնույթ էքսկուրսիաներ՝ օգտվելով պետական արտոնություններից, ինչպես ճանաչողական բնույթի, այնպես էլ ժամանցային: Էքսկուրսիաների ողջ պատասխանատվությունը ծնողները վերցրել են իրենց վրա:

*Հոկտեմբերի 18՝ էքսկուրսիա դեպի Երևան, այցել ենք Հովհաննես Թումանյանի տիկնիկային թատրոն, դիտել «Ռիքիշ Հուռին» ներկայացումը:* /I-IV դասարաններ, նախակրթարան

*Դեկտեմբերի 20՝ էքսկուրսիա դեպի Երևան, այցել ենք Հովհաննես Թումանյանի տիկնիկային թատրոն, դիտել «Սանտայի նվերը» ներկայացումը:*/I-IV դասարաններ, նախակրթարան

2023-2024 առաջին կիսամյակի ընթացքում որևէ դիտողություն կամ նկատողություն չեմ ստացել:

<< ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ >> Մեթոդական միավորման

մ/մ նախագահ՝ / / Տ. Սահակյան

Сканировано с CamScanner